№ 119 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՑՈՒԼԻՍԻ 1 **1899** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՑՈՒԼԻՍԻ 1 № 119

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Բաժանորդագրութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառի 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՎԱՑ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«Մշակի» վեց ամսվայ գինն է, յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը վեց ռուբլի. մէկ ամսվանը—մէկ ռուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարվայ համար 3 դոլլար, Եւրոպայի բաժանորդները—16 ֆրանկ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և դրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ»; իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Բայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի կարևոր պահանջ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Նոր-Բայազէտից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պանդխտութիւնը Գանձակի գաւառում:

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ՊԱՀԱՆՋ

—

Որբանոցներ հիմնելու խնդիրը ստացել է վերջին ժամանակներս մի առանձին նշանակութիւն: Որբանոցներ հիմնելու մասին մտածում են և Անդրկովկասում, որտեղ առհասարակ սակաւաթիւ են թէ հասակաւորների և թէ փոքրահասակների համար զանազան տեսակ ապաստարաններ: Որբանոցները, իբրև ապաստարաններ, սակայն չեն կարող հասած լինել իրանց նպատակին կատարեալ կերպով, եթէ նրանք առանձին ուշք չը դարձնեն խնամվող որբերի այնպիսի դաստիարակութեան վրա, որ վերջիններս հասակն առած ժամանակ կարողանան ինքնուրոյն աշխատանքով ապահովել իրանց կեանքը:

Այդ պատճառով որբանոցները պէտք է խնամվող որբերին տան թէ գրագիտական կրթութիւն և թէ մի որ և է արհեստ նրանց ձեռքը: Այն մանուկները, որոնք ունեն ծնողներ, մեծ մասամբ ապահովված են իրանց պարապմունքի վերաբերութեամբ, որովհետև նրանց կօգնեն ծնողները և ազգականները, կընդունեն իրանց արհեստի մէջ և ամեն կերպ կաջակցեն: Բայց որբերը սերտ կապ չունեն հասարակութեան հետ և ստիպված են յաճախ միայն ինքնուրոյն աշխատանքի վրա յոյս դնել, առանց կողմնակի օժանդակութեան: Իսկ երբ որբանոցները կը տան գրագիտութեան հետ միասին և գործնական այնպիսի ուսում, որը կարելի կը լինի գործադրել կեանքի մէջ, այն ժամանակ որբանոցից դուրս եկած մանուկը կը մտնի կեանքի մէջ զինված և պատրաստ՝ մաքառելու խոչընդոտների և կռիւների դէմ:

Երբ որբանոցների սաների վրա կը սկսենք նայել ոչ միայն իբրև աղքատների վրա, որոնց պէտք է մի կտոր հաց տալ և քաղցածութիւնից ազատել, այլ իբրև հասարակութեան հարազատ զաւակների վրա, որոնց պէտք է կրթել և պատրաստել ապագայի համար և ապահովել նրանց ապրուստը հաստատ միջոցներով, այն ժամանակ միայն կարող ենք հանգիստ սրտով ասել, որ մենք արդարև մի հիմնաւոր գործ ենք կատարել և լայն կերպով բարեգործութիւն ենք արել: Իսկ եթէ նրանց ձեռքը տալով կատարելագործված արհեստներ կարող լինենք նպաստել օգտաւէտ արհեստների տարածման—դա կը լինի և առաջադիմական մի գործ հասարակութեան համար:

Որբանոցների մէջ արհեստների ներմուծումը այդպիսով պէտք է համարվի այդ ապաստարանների անհրաժեշտ պայմաններից մէկը, որպէս զի որբերի խնամատարութիւնը լինի կատարեալ և նպատակայարմար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Եթէ արտասահմանից եկած ամեն մի իր, նոյն իսկ հասարակ, չնչին իր, ունի մեծ անուն և բարձր գին—դա, ի հարկէ, առանց պատճառի չէ: Այնտեղ, արտասահմանում, ամեն ինչ լաւ է. այնտեղ գիտեն ոչ միայն շատ գեղեցիկ ասեղներ շինել, այլ և կեանքի համար ստեղծել այնպիսի յարմարութիւններ, որոնց մենք միայն երազել կարող ենք: Ինչից է առաջանում այն նախանձելի, շատ նախանձելի առաւելութիւնը, որ արտասահմանում է թագաւորում: Հարցը ինքն ըստ ինքեան պարզ կը լինի, եթէ մենք համեմատութեան առնենք, օրինակի համար, միայն բնութեան հարստութիւնները: Որ մեզ մօտ բնութիւնը աւելի գեղեցիկ է, աւելի հարուստ, քան արտասահմանեան շատ տեղերում, որ մեր հանքային ջրերը իրանց բուժիչ յատկութիւններով, իրանց տեղի դիրքով եւրոպական կուրորտներից անհամեմատ լաւ են, այդ կը վկայէ ամեն մի ճանապարհորդ, որ տեսել է թէ մերը և թէ արտասահմանեանը: «Новости» լրագրի մէջ յայտնի գրող Օբօլէնսկի նկարագրում է Կարլսբադի յարմարութիւնները: Առիթը այն ընորոշ հանգամանքն է, որ Ամերիկայի Միացեալ-Նահանգների դեսպանը, ինչպէս հաղորդել են ամերիկական լրագիրները, չէ կարողանում Պետերբուրգում բնակարան գտնել ոչ թէ այն պատճառով, որ բնակարաններ չը կան, այլ այն պատճառով, որ եղածները սաստիկ թանգ են: Այսպէս, մի բնակարանի համար դեսպանից պահանջում են 40,000 ռուբլի, իսկ այդ գումարը զերազանցում է մեծ հանրապետութեան ներկայացուցչի տարեկան բիւջէն: Պ. Օբօլէնսկի բացականչում է: «Փառք Աստուծու: Պետերբուրգի (ինչու միայն Պետերբուրգի) տանտէրերը գտնէ այդ բանի մէջ յայտնի դարձան և հարկադրեցին, որ «ամբողջ աշխարհը» խօսէ նրանց մասին: Ո՛րպիսի փառք: Մի ուրիշ բանով մենք փառաւորվել չը գիտենք, իսկ թանգութեան մէջ—մեծ վարպետներ ենք»:

Եւ սակայն իսկապէս փառաւորվելու քանի քանի գեղեցիկ ասպարէզներ կան:

Երբ ես ճանապարհվում էի Պետերբուրգից, ինձ վախեցնում էին այն սոսկալի գներով, որոնք, որպէս թէ, գոյութիւն ունեն Կարլսբադում սէզօնի ժամանակ: Եւ ինչ դուրս եկաւ: Չը նայած որ բոլոր երկիրներից տանտէր հաղարներով մարդիկ են եկել, բոլոր բաների գները այստեղ Պետերբուրգի գներից եթէ ցած չեն, բարձր էլ չեն, մանաւանդ բնակարանների վերաբերմամբ: Բայց ձեզ այնքան յարմարութիւններ, այնքան կօմֆօրտ են տալիս, որ այդ մասին նոյն գնով Պետերբուրգում երազել անգամ չի լինի: Ես չեմ խօսում ռուսաց, ամօթ չը լինի ասելը, «կուրօրտների» մասին, ինչպէս են Եալտան և Գուրզուֆ:

Եւ իրաւ, յօդուածագրի նկարագրութիւնից երևում է, որ արտասահմանեան Կարլսբադները միայն բնութեան սիրած անկիւններ չեն, այլ մարդու խնամքներով, հոգատարութեամբ այնքան գեղեցիկ յարմարութիւններ են ստացել, որ այնտեղ ապրողը չէ կարող զգալ թանգութիւն, չի ափսոսայ իր ծախսածը:

Անտառապատ բարձրութիւնների վրա, որոնք ժռտենում են քաղաքին Տեպլի գետի հովտի երկու կողմից, ամեն տեղ շինված են հարիւրաւոր վերստ գերազանց ուղիներ, այնքան լայն, որ հինգ հոգի մի շարքով կարող են ազատ գնալ: Այդ ճանապարհները այնպէս պնդացրած են, որ նոյն իսկ ամենասաստիկ հեղեղից յետոյ էլ դուք ազատ կարող էք զբօսնել: Ամեն տեղ դրված են փայտէ նստարաններ, որոնց վրա կարելի է ոչ միայն նստել, այլ և պառկել: Անդադար հանդիպում են շքեղ հովանոցներ ժողովրդական յատակներով, ուր կարող էք պատսպարվել անձրևներից: Վերջապէս ամեն տեղ, մի վերստ կամ քիչ աւել տարածութիւն անցնելուց, դուք պատահում էք կամ կաֆէներ կամ բէյստորաններ, որոնք շատ լաւ են պահ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՆԴԽՈՒԹԻՒՆԸ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌՈՒՄ

—

Որքան առաջ ենք գնում, այնքան աւելի աղքատութիւնը մեր անբաժան ընկերն է դառնում: Երբ ազգաբնակութեան թիւը շատ քիչ էր մեր գիւղերում, ապրուստը լաւ էր, պարապմունքի գլխաւոր աղբիւրները՝ երկրագործութիւն, անասնապահութիւն, ածխագործութիւն բաւականութիւն էին տալիս ժողովրդի կարիքին, ապահովում էին նրա տնտեսական կեանքը: Բայց հետզհետէ մարդիկ շատացան և այդ բազմութեան հետ միասին աւելի մեծ կարիք ստեղծվեց: Պէտք է առաջվայ ունեցած փողով, մթերքով, հացով աւելի շատ մարդ ապրէին: Հողի ընդհանուր չափը՝ 16—18 օրավար, Գանձակի գիւղերում մնում է նոյնը, ինչ որ տասնեակ տարի առաջ: Մշակելու ձևը ևս դարձեալ նոյն նահապետական, պարզ եղանակն է: Հողը քչանալով, գիւղացին չէ կարողանում այդ պակասութեան առաջն առնել՝ թէկուզ հէնց այդ հողը լաւ մշակելով և աւելի շատ արդիւնք ստանալով:

Պարապմունքի գլխաւոր աղբիւրները, փոխանակ հետզհետէ շատանալու՝ քչանում են: Նորանոր ձեռնարկութիւն անկարող են անել գիւղացիք: Ո՛չ մի գիւղում չը կայ մի փոքր ի շատէ կրթված տնտեսագէտ: Այսպիսով կեանքը չէ առաջադիմում, պարապմունքները չեն աւելանում, երկիրը, մեր հարուստ երկիրը շատ քիչ է գիւղացու խորազնին ուշադրութեանը արժանանում:

Եւ բաւական չէ, որ ապրուստի նոր-նոր աղբիւրներ առաջ չեն գալիս, եղածն էլ պակասում է: Անտառը, որ երբեմն Գանձակի գիւղերում հասարակութեանն էր պատկանում, այժմ գտնվում է պետութեան իրաւունքի տակ: Ոչ ոք չէ կարող մի փայտ անգամ կտրել այնտեղից: Կան անտառապահներ, որոնց ռոճիկը նոյն իսկ անուղղակի կերպով դուրս է գալիս գիւղացու աղքատ գրպանից: Տներ շինելու համար հարկաւորվում են գերաններ, քարեր. և նա ստիպված է մի գերանին վճարել 10—12 ռուբլի: Ածխագործութիւնը և տախտակավաճառութիւնը, որոնք մի տասնեակ տարի առաջ մեր գիւղացու ապրուստի գլխաւոր աղբիւրն էին կազմում, այժմ, անտառից զրկվելու պատճառով, դադարել է: Լեռները առաջ հարուստ էին քարերով, և գիւղացին շատ հեշտութեամբ ստանում էր իրան հարկաւոր քարերը շինութեան համար: Այժմ կամ սպառվել են և կամ մասնաւոր մարդիկ, բախտախնդիր անհատներ, հանք գտնելով այդ լեռներում, արգելել են գիւղացիներին քանդել այդ սարերը և քարեր հանել: Եւ գիւղացին ստիպված է նախ՝ աւելի հեռու գնալ, ուրեմն կորցնել աւելի շատ ժամանակ և վճարել աւելի շատ ճանապարհածախս. երկրորդ՝ առնել, փողով գնել ուրիշ գիւղերից:

Բանանց, Քարհատ, Կիրանց, Խաչակապ գիւղերի բնակիչները սկզբներում ոչքան էին օգտվում այդ տեղերում գոյութիւն ունեցող հանքագործարաններից. իսկ այժմ ապրուստի այդ գլխաւոր աղբիւր կազմող գործարանները չը կան, գոյութիւն չունեն:

Փիբ գիւղի շրջակայքում առաջ գտնվում էր շքի նշանաւոր գործարան. օրական հարիւրաւոր բանուորներ գործ էին գտնում այդտեղ. այժմ այդ ևս չը կայ:

Չը կարողանալով գտնել ապրուստի մեծ-մեծ աղբիւրներ, գիւղացիները սկսեցին խնայողաբար վարվել, տնտեսութիւն անել. այդ հանգամանքից առաջ եկաւ անհիւրասիրութիւնը:

Սկզբներում ամեն ինչ առատ էր, և գիւղացին առիթ չունէր խնայելու. իսկ այժմ ոչինչ չը կայ, աղքատութիւն է. իրաւունք ունի և նոյն իսկ պարտաւոր է խնայելու, տնտեսաբար վարվելու: Այսպիսի աղքատ հանգամանքներում առաջ եկան նորանոր չարիքներ: Կարծէք մի չարիք սկզբնաւորութիւն, պատճառ էր մի այլ չարիքի. կարծէք իրար հետ շղթայված էին գիւղական կեանքի բոլոր վնասակար կողմերը: «Չրերը պղտորվեցին», տնտեսական անկումը աւելի ևս կսկծեցնող, անտանելի դարձրեց վաշխառութիւնը: Տանուտէրները սկսեցին առաջվանից էլ շատ հասարակութեան փողերը կլանել, տարկահանները հաւաքած տուրքերը սկսեցին պակասեցնել և ամբողջովին չը մտցնել արքունի գանձարանը: Այսպիսով և ուրիշ երկրորդական մի քանի հանգամանքներով՝ տարկերը և ապառիկները աւելացան: Ամեն կողմից կեանքը դէպի նիւթական անապահովութիւնն էր տանում. ամեն կողմից տնտեսութիւնը դէպի քայքայված վիճակն էր դիմում, կարիքը սեծացաւ, աղքատութիւնը շատ հզօրացաւ և իր բոլոր դառնութիւններով սկսեց ճնշել գիւղացուն:

Միջոցներ որոնվեցին այս դրութիւնից դուրս գալու, հնարներ մտածվեցին այս թշուառ կացութիւնից ազատվելու: Եւ ահա սկսվեց պանդխտութիւնը—այդ տխրալի և անմխիթար երեւոյթը գիւղական կեանքի մէջ: Թողեցին հայրենի խրճիթը, քաղցրահամ աղբիւրները, բարձր, կանաչազարդ վայրերը—և հեռացան դէպի քաղաքների ապականված մթնոլորտը, դէպի բարդ ու շռայլ կեանքի ծանր պայմանները: Նորատի ամուսիններ, զառամեալ ծնողներ, քոյրեր, եղբայրներ անօգնական մնացին գիւղական աղքատ յարկի տակ. ոչ ոք չէր հարցնում նրանց դրութիւնը: Իրանց փրկութիւնը սպասում էին օտարութիւնից, պանդուխտ զաւակը պիտի նրանց արտասուքը չորացնէր:

Գանձակի գաւառից պանդխտութիւնը տարածվում է Բագու, Գանձակ, Բաթում, մասամբ և Թիֆլիս քաղաքներում, դերմանական Ելեն-դորֆ կոլոնիայում, նոյնպէս և, բաւական մեծ չափով՝ Գետաբէկի և Ղալաքեանդի հանքագործարաններում:

Պանդուխտները պարապում են զանազան արհեստներով, ինչպէս, օրինակ, փականագործութեամբ Բագուում, խոհարարութեամբ Ղալաքեանդում, դերձակութեամբ և հիւսնութեամբ Թիֆլիսում. կան բանուորներ, որոնք ստանում են օրական 70—80 կ.: Գետաբէկում և Ղալաքեանդում, բացի այս պարապմունքներից, որոնք համարեա սովորական են Գանձակի պանդուխտների համար, նրանք կատարում են նաև ուրիշ գործեր—մշակութիւն և այլն:

Պանդուխտների թիւը համեմատաբար աւելի շատ է այն գիւղերից, որտեղ ազգաբնակութիւնը մեծ է և ժողովուրդն աւելի չքաւոր: Զարդախլուն չունի պանդուխտներ: Այնտեղ ժողովուրդը կարողանում է իր հարկերը հեշտութեամբ վճարել, վաշխառուներից ազատ է, ապ-

վում, ունեն փոքրիկ այգիներ, շատ գեղեցիկ ուտելիք և մեր ու քաղաքավարի ծառաներ:

Զարմանալի է, որ աշխարհի բոլոր ծայրերից և մանաւանդ Ամերիկայից հաղարաւոր մարդիկ են թափվում այդպիսի տեղը բժշկվելու և կազդուրվելու համար: Ինչու, հարցնում է յողուածագիրը, մեզ մօտ չեն կարողանում այդ յարմարութիւնները յիշեցնող մի բան անգամ ստեղծել, մի կողմ թողնելով նմանվելու միտքը: Նա բերում է Եալտայի օրինակը, ուր երկար տարիների ընթացքում բարեփոխութիւնների մի ամբողջ ծրագիր գոյութիւն ունի, բայց չէ իրագործվում: Եւ ինչ բարեփոխութիւնների մասին խօսել, քանի որ այս ամառ, ինչպէս հաղորդում են լրագիրները, Եալտան նոյն իսկ իրմելու ջուր չունի:

Եւ որքան հեռու ես գնում Ռուսաստանից, այնքան աւելի ես տեսնում այն հայրենասիրական միութիւնը, որ այստեղ հսկայական հասարակաշահ գործեր և հիմնարկութիւններ է ստեղծում. սիրտ ցաւում է Ռուսաստանի համար, ուր անմիաբանութիւնը, փոխադարձ թշնամութիւնը, դանդաղկոտութիւնը չեն թոյլ տալիս, որ հասունանայ և զարգանայ որ և է մի հասարակական ծրագիր: Եւ, սակայն, մենք դրանով միլիոններ ենք կորցնում: Ախար Կրիմի կլիման, նրա բնութիւնը, բուսականութիւնը, նրա հրաշալի տեսարանները, նրա ծովը հարիւր և հազար անգամ լաւ են Կարլսբադից: Իսկ մեր Կովկասը: Ինչպէս կարող է Կարլսբադը համեմատվել նրա հետ: Ես խօսեցի այստեղ տասնեակ օտարերկրացիների, ամերիկացիների հետ, նոյն իսկ կրթված չէխերի հետ, որոնք սկզբունքով սիրում են Ռուսաստանը, և նրանք, լսելով «Կրիմ», «Կովկաս» բառերը, հարցնում են. «Իսկ դրանք ինչ են. միթէ այնտեղ լաւ է»: Եւ ինչ պատասխանել դրանց: Ա՛խ, որքան այդ բանը ցաւալի է, վիրաւորական:

Արտասահմանի և մեր մէջ եղած զանազանութեան գաղտնիքը, ուրեմն, պարզ է: Կուլտուրական յետամնացութիւնը այսպիսի օրինակներով է երևան գալիս: Ունենք շատ լաւ բաներ, բայց աչքներս միշտ արտասահմանի վրա է, որովհետև մեր հարստութիւնները չեն կարողանում շահագործել այնպէս, ինչպէս վայել է կրթված, զարգացած մարդկանց:

*

Այդ դժբաղդ անկարողութեան մի ցնցող պատկերը կարող ենք գտնել մեր նաւթային մայրաքաղաքում: Սաման է, և Բաքուի «Каспій» լրագրի համարեա իւրաքանչիւր տողից լսվում է գանգատ դժոխային տօթի դէմ: Բայց ինչ հարկաւոր են նկարագրութիւններ. բաւական է ասել, որ այդ հնոցի մէջ ջուր չը կայ:

Ծարաւ է բաքուցին, տալիս են նրան մի ինչ որ կեղտոտ հեղուկ, որ փորլուծութիւն և ստամոքսի ու աղիքների հիւանդութիւններ է պատճառում, և ասում են. չը կայ ջուր: Բաքուցին խեղդվում է փոշու ամպերի մէջ, որոնք սոսնձափոքր բամուց բարձրանում են փողոցներից, և ասում են. փողոցները ջրելու համար ջուր չը կայ: Հրդեհները չէ կարելի հանգցնել, որովհետև ջուր չը կայ: Մի խօսքով, Բաքու քաղաքի դժբաղդ բնակիչը ամեն տեսակ չարչարանքներ է կրում ջրի պակասութիւնից:

Եւ լրագիրը աշխատում է գտնել պատճառը: Ինչից է, հարցնում է նա, որ ջրի հարկաւորութիւն ունեցող գործարանները, բաղնիքները երբէք չեն դանդատվում ջրի պակասութեան վրա, երբէք չեն դադարեցնում իրանց գործունէութիւնը ջրի պակասութեան պատճառով և միայն քաղաքացին է, որի վրա այդպէս ծանրացած է ջրի տագնապալից հարցը: Պարզ է թէ ինչու: Գործարանը, բաղնիքները ունեն տէրեր, որոնք գիտեն թէ առանց ջրի ապրել և գործել չէ կարելի, իսկ քաղաքի տէրերը, այսինքն քաղաքային վարչութիւնը, այդպիսի գլուխ պատռող հարցերով չեն զբաղվում: Քաղաքը ունի տեխնիկներ, դրամական մեծ միջոցներ, բայց և այդպէս՝ պապակված բաքուցին մի կաթիլ մաքուր ջուր չէ գտնում: Եւ որտեղից գտնէ: Նրանք, որոնք պիտի հոգան այդ խեղճի ամենաանհրաժեշտ կարիքները, կատարեալ անկարողութեան են մատնված և թողել են ամեն ինչ Աստուծու կամքին: Կարող ենք հաւատացնել Բաքուի լրագրին, որ նրա գիւղը ոչ նոր է, ոչ էլ ապշեցնող: Ոչ ոք երբէք չէ էլ կարծել, որ եթէ մի քաղաքի ղեկավարները պարտաճանաչ, գործունեայ և ընդունակ մարդիկ չեն, այդ քաղաքը, այնու ամենայնիւ, կը ծաղկէ և ոչինչ պակասութիւն չի ունենայ: Մեղաւորին չը պէտք է այդքան երկար և ձիգ որոնել. աւելորդ է «փաստեր» էլ հաւաքել այդ մեղաւորի դէմ: Նա ձեր առաջ է, այդ մեղաւորը. դուք այն ասացէք, թէ ինչ պէտք է անել չարիքը վերացնելու համար: Մի բաժակ մաքուր ջրի կարօտ բաքուեցու համար ոչ մի մխիթարութիւն չէ, եթէ նա հաստատ իմանայ, որ իր տանջանքի պատճառը քաղաքային վարչութիւնն է: Ի՞նչ էք անում դժբախտութեան դէմ. այդ է աւելի հետաքրքրական հարցը...

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

—

Յունիսի 22-ին

Շրջակայ բաղմաթիւ գիւղերում, շատ քիչ բացառութեամբ, ընտանիքների տնտեսութեան մէջ տիրապետում է ընդհանուր քաքայում: Վերջին 4—5 չարաբաստ տարիներում գիւղացին կորցրեց այն ամենը, ինչ որ ունէր տասնեակ տարիներից ի վեր, ինչ որ տնտեսել էր տարիների ընթացքում: Մտէք որ գիւղը ուզում էք, չէք գտնի մի ընտանիք, որ իր ապրուստից գոհ լինի, իր վիճակից բաւական, լինի այդ ընտանիքը հայ, թուրք և կամ եզիդի: Նոյն իսկ գիւղական հարուստ համարված «հավմիայ» գերդաստաններում չէք տեսնի նախկին ընտանեկան բարեկարգութիւն: Վերջին անարդասաւոր տարիներում մինչև իսկ գիւղական միջակ ապրուստ ունեցողները հազիւ կարողանում են տնտեսել իրանց ընտանիքի կէս տարվայ պաշարը միայն, իսկ միւսները, չունևորները ոչինչ չեն կարողանում հայթայթել, որովհետև այդպիսիները ոչ լծկաններ ունեն, ոչ սերմացու և ոչ էլ գնելու և հողեր ցանելու միջոց: Դրանց հողերն անգամ, հին պարտքերի դիմաց, տարիներով ծառայում են ունևոր դասակարգին, իսկ իրանք նորից նոր պարտքեր են անում և տոկոսներ վճարում՝ ապագայում իրանց քայքայված տնտեսութիւնը կանոնաւորելու յոյսով... Զուր յոյսեր...

Այս տարի կարծէք հացի արհեստական թանգութիւն է եղել Նոր-Բայազէտի գաւառում. այդ երևում է նրանից, որ անցեալ աշնանը, հացահատիկները կասելուց քիչ յետոյ, նոյեմբերին, ցորենի խալվարը 25—26 բուբլուց բարձրացել է 32—33 ր., իսկ գարին՝ 15—16-ից՝ 20—22 է դառել մի ամսվայ ընթացքում, և այդ ժամանակ, երբ ռաշպար դասակարգից ոչ ոք դեռ կարիք չունէր հաց գնելու, այլ ասպարէզը մնացել էր մի քանի վաճառականներին, որոնք նախ իրանց ապառիկների փոխարէն հաց են վերցրել գիւղացիներից և ապա գինը միանգամից բարձրացրել են, քաջ գիտենալով, որ այսօր կամ վաղը գիւղացին, վիզը ճկած կը դիմի իրանց՝ ձեռք բերելու հացահատիկ ապառիկ վճարով՝ կրկնակի գներով... Եւ իրաւ, ուզիղ կէս տարին անցած, (նոյեմբերից մինչև ապրիլ) գիւղացին վերջացնելով իր պաշարը, կամ աւելի ճիշտն ասած՝ երբ սպառեց կէս տարվայ կերը, անցեալ տարիների նման մայիսին սկսեց ապառիկ հաց վերցնել վաճառականներից հրէշաւոր գներով՝ թէ ուտելու և թէ ցանելու համար: Ասենք ապառիկ ծախսի համար հացահատիկները իրանց որոշ «մաղանդան» ունեն Նոր-Բայազէտում, այն է 20 ր., արժեցող խալվար գարին ծախվում է 28—30 ր. իսկ 30 ր. ծախվող ցորենը՝ 38—40 ր. 4—5 ամիս ժամանակի: Այդ գների դէմ վիճել անկարելի է. դա ընդհանուր սովորութիւն է թէ ծախողի և թէ առնողի համար: Բայց ինչ կասէք կանխիկ գնելուն, երբ դարձեալ էժան չէ կարելի գնել, որովհետև հաց ունեցողներից շատերը աւելի ցանկանում են ապառիկ ծախել, քանի որ 4—5 ամսվայ ընթացքում նրանք 5—10 ր. աւելի շահ ունեն, քան կանխիկ ծախելը. նրանք լաւ ճանաչում են իրանց խեղճ և «հաւատարիմ մուշտարուն», գիւղացուն, որը գիտէ, թէ ինքը միշտ չքաւոր է, սոված, ուստի նեղ օրերում իր «ձեռքը բռնում է» դարձեալ հաց տուող վաճառականը...

Արհեստական թանգութեան նպաստել են նաև այն մանր-մունը հացավաճառները, որոնք, ինչպէս ասում են, 5—10 շահի ձեռք բերելով՝ վաղ են տալիս գաւառը և հացի գինը օրէցօր բարձրացնում: Ապա թէ ոչ՝ ո՞վ է տեսել որ հացի գինը աշնանը, կալսելուց յետոյ, լինի 32—33 ր. խալվարը և այդ թուերի շուրջը տատանվելով՝ ամբողջ 6—7 ամիսների ընթացքում հացահատիկները սպառվելուց և ցանվելուց յետոյ՝ դարձեալ նոյն արժէքը ունենայ և դեռ էլ աւելի ընկնի—էժանանայ... Զը նայած, որ հաց ամբարողները ի նկատի ունէին պահելով աւելի թանգ ծախել հացահատիկները, բայց վերջին անձրևները նրանց յոյսը օդը ցնդեցին, որովհետև հացի այժմեան գնից մի բան էլ պակաս է, և եթէ շարունակ անձրևներ տեղան, յոյս կայ, որ էլ աւելի էժանանայ:

Կռան

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Գեօրգիևսկ, յունիսի 18-ին

«Մշակի» № 99-ի մէջ կարդացինք Սալլումեանի նամակը Ախալքալաքից, որի մէջ պատմված է, թէ ինչպէս, շնորհիւ մի ուսուցչի, հասարակական ցեղ վաչխառու Կոռաքաջը, աղիողորմ լացով, դատաստանատնից բանտ ուղարկվեց: Գիւղական այդ պարտաճանաչ ուսուցիչը, պ. Ց. Քոսեանց, արդարև, հրապարակական գովասանքի ու շնորհակալութեան արժանի է:

Եւ մենք, առիթից օգուտ քաղելով, աւելորդ չենք համարում հասարակական ազնիւ գործիչների ուշադրութիւնը դարձնել մի ուրիշ չարիքի վրա, որի դէմ նոյնպէս անհրաժեշտ է կռուել:

Մեր խօսքը այն մասին է՝ թէ ինչպէս են վերաբերվում քաղաքացի, օրինակ, խանութպանները, արհեստաւորները, ոգելից ըմպելիքներ ծախողները, մի խօսքով քաղաքի ստոր դասակարգը դէպի գիւղացին, դէպի նրա պատիւն ու սեփականութիւնը: Քաղաքում գիւղացուն այլ կերպ չեն անուանում, եթէ ոչ «էշ գիւղացի», «մարդ չէ—գիւղացի է»: Այս խօսքերն ախալքալաքցիներին հասկանալի է: Քաղաքում գիւղացուն խաբելը սովորական բան է. օգտվելով խեղճերի տգիտութիւնից, հարուստ վաճառականից սկսած մինչև վերջին խանութպան աշկերտը, մեծ վարպետութեամբ խաբում են գիւղացուն թէ կշեռքի, թէ արշինի և թէ ապրանքի ու փողի մէջ, խաբում են նրան առանց խղճի տանջանքների զանազան տեսակ ստոր ու սատանայական խարդախութեամբ: Այդ անսիրտ մարդիկ խաբելու ժամանակ սկզբում գիւղացու հետ շատ սիրով, քաղաքավարի ու բարեկամաբար են վարվում, սակայն երբեմն եթէ գիւղացին, նկատելով առևտրի մէջ անարդարութիւն, փորձում է բողոքել, այն դէպքում ամեն տեսակ գարշելի հայհոյանքներ և թուք ու մուր են թափվում «գոմէշ» գիւղացու վրա: Ի՞նչ անէ առանց այն էլ բնութիւնից զրկված գիւղացին: Անիծելով իր բաղդը, իր ծնված օրը, գլուխը կախելով հեռանում է «անասաուած» խանութպաններից, լաւ իմանալով, որ ճարպիկ ու «լիրբ» քաղաքացու հետ անհնարին է գլուխ ելնել:

Ախալքալաքում շատ կան և այնպիսի մարդիկ, որոնք մեծ բաւականութիւն են ստանում, տեսնելով, թէ ինչպէս գիւղացին բարկանում է և ինքն իրանից դուրս դալիս: Նրան բարկացնելու, կամ «ախալքալաքցու խօսքով, «փրփրցնելու» համար դիմում են զանազան կեղտոտ միջոցների, օրինակ, ջուր կամ ալիւր են թափում նրա վրա, նրա փափախը գետին են խփում, շատ անգամ հոտած մրգեղէններ են նետում նրա վրա և այդպիսով խեղճ գիւղացուն բարկացնելով «զուարճանում են»:

Անտանելի է գիւղացու դրութիւնը նաև այն ժամանակ, երբ նա պանիր, իւղ, ալիւր և այլ մթերքներ, յաճախ իր որդիների բերանից կտրելով, քաղաք է բերում ծախելու և իր զանազան պակասութիւնները հոգալու համար: Վաճառականացում, գիշատիչ թռչունների պէս, քաղաքացիներն ամեն կողմից գիւղացու վրա են թափվում. առաջ են գալիս միջնորդներ, գիւղացու առանց այն էլ թշուառ կեանքի վրա: Այսպիսով Գանձակի գիւղերից դուրս եկած պանդխտութիւնը վնասակար հետևանքներ է ունենում առ այժմ միայն Գետաշէնի վերաբերմամբ: Միւս գիւղերի պանդխտները դեռ ևս օգտակար են աւելի, քան վնասակար թէ իրանց ծնողների համար մասնաւորապէս և թէ գիւղի համար՝ ընդհանրապէս:

Սակայն, ինչպէս Գետաշէնի, նոյնպէս և միւս գիւղերի պանդխտութիւնը ունի այն վատ կողմը, որ խլում, տանում է օտարութիւն մատաղ ոյժերը: Գիւղը միանգամայն զրկվում է երիտասարդութիւնից. այսպիսով հասարեա գիւղական կառավարութիւնը ծերակոյտ է ներկայացնում: Հասարակութեան ամեն ասպարէզում ծերերն են աչքի ընկնում:

Այս փոքրիկ ակնարկը ձգելով Գանձակի գաւառից դուրս եկած պանդխտութեան վրա մենք ոչ թէ խորհուրդ կը տանք, որ հնարաւոր եղածին չափ կրճատվի պանդխտների թիւը, քանի որ այդ կախված է երկրի տնտեսական կեանքից, հազարաւոր ծանրակշիռ հանգամանքներից, որոնք անկարելի են դարձնում գիւղում մնալը: Պանդխտութիւնը կը վերանայ այն ժամանակ, երբ կարիքը կը պակասի մեր գիւղերում. նա աղքատութեան անբաժան ընկերն է: Մենք կը ցանկայինք միայն, որ պանդխտները օտարութեան մէջ միջոց ունենան պարապ ժամանակ աւելի լուրջ և կարևոր բաներով զբաղվելու, որ փոխանակ անառականոցների՝ գրադարաններ հիմնվեին պանդխտների համար և փոխանակ գինետների՝ կրթող, զարգացնող և ազնուացնող հիմնարկութիւններ կազմակերպվեին:

Սիմ. Յակոբեանց

Գանձակ.

բելու համար մեծամեծ նեղութիւններ չէ կրում: Սակայն այդ գիւղից Գանձակում, Թիֆլիսում և Գետաբէկում կան 50 դաղթական ընտանիք, որոնք գաղթել են ոչ թէ չքաւորութիւնից ստիպված, այլ քաղաքում կեանք անցկացնելու ցանկութիւնից:

Բարսում գիւղը, որ բաղկացած է 200 տնից, ունի մօտաւորապէս 200 պանդուխտ Բաքում. Գանձակում, Գետաբէկում: Նշանակում է ամեն մի տուն մինչև թուով մի պանդուխտ ունի, ուրեմն չը կայ տուն, որ ազատ լինի պանդխտութիւնից: Չէ կարելի ասել, որ բոլոր պանդուխտները կարիքից միայն ստիպված թողել են Բարսումը, բայց կարելի է առանց վարանելու ասել, որ 200-ից անշուշտ 180 հոգին օտարութեան լուծը իրանց պարանոցին չքաւորութեան պատճառով են կրում: Կան պանդուխտներ, որոնք նոր աշխարհ տեսնելու ցանկութիւնից, հարստանալու դիտումից ստիպված են թողնում իրանց հայրենիքը. կան նաև այնպիսիներ, որոնք ընտանիքում պատահած զանազան կռիւների, անհամաձայնութիւնների պատճառով են հեռանում գիւղից. կան նաև անհատներ, որոնք ուզղակի օրինակ են վերցնում ուրիշներից: Բայց այսպիսիների թիւը շատ քիչ է. ընդհանուր պատճառը աղքատութիւնն է, որից և առաջանում է պանդխտութեան 90%-ից աւելին:

Սովորաբար պանդուխտները լինում են երիտասարդներից, սկսած 15-ից մինչև 40 տարեկան մարդիկ: Օտարութեան մէջ մնում են 2—3 տարով. այդ 2—3 տարվայ ընթացքում մի անգամ դալիս են հայրենիք, փող են բերում տուն, շորեր, հագուստներ են առնում տան համար, մի շաբաթ մնում, յետոյ կրկին հեռանում պանդխտաստեղին: Գետաբէկում գտնվող պանդուխտները, որոնք Բարսումից 3 ժամվայ ճանապարհով են միայն հեռու, աւելի շուտ-շուտ են գալիս, մանաւանդ որ, այդ փոքր տարածութիւնն անցնելու համար, ճանապարհածախս նոյն իսկ հարկաւոր չէ. կարող են ոտով գնալ: Պանդուխտների ընտանիքը իրանց բացակայութեան ժամանակ կառավարում է կամ ծնողը կամ ազգականներից մինը. իսկ ով որ չունի ոչ այս, ոչ այն, նա իր ընտանիքը յանձնում է գիւղում առաքինի և ազնիւ հռչակ ստացած մէկին: Առհասարակ թէ Բարսումի և թէ Գանձակի միւս գիւղերի պանդուխտները չեն մոռանում իրանց ընտանիքը. օտարութեան մէջ չեն փչանում, շռայլութիւն չեն անում և միշտ փող են ուղարկում տուն:

Բացի Բարսում գիւղից, որ այդքան մեծ թուով պանդուխտներ ունի: Գանձակի գաւառում յայտնի է նաև Գետաշէնը, որից օտարութեան մէջ գտնվում են մօտ 250 մարդ: Այդ գիւղն ևս տառապում է չքաւորութեան ճիրաններում. ապրուստի ոչ մի աջող պայման չունի, որ կանոնաւորէ գիւղացու թշուառ վիճակը: Շատ քիչ քանակութեամբ հող ունեն: Վերջերս մանաւանդ, երբ մի կողմից կալուածատէր Ադիբէգեանները իրանց հարևան կալուածքին աւելացրին Գետաշէնի հասարակութեանը պատկանող հողերից մօտաւորապէս 80 դեսեատին, երբ Մէլիք-Մնացականեանները սեփականացրին 84 դեսեատին գիւղական հող—Գետաշէնը սկսեց աւելի թշուառանալ: Հասարակական հողերից կամենում են օգտվել նաև Մէլիք-Մանասեանները:

Անցեալներում Գետաշէնի համայնքը 85 դեսեատին հող հաստատեց Մէլիք-Մնացականեանների վրա. սակայն դրանք փոխանակ երախտագիտութիւն ցոյց տալու թշուառ ազգաբնակութեանը, ընդհակառակը խլեցին նրանցից նաև ուրիշ հող՝ 84 դեսեատին մեծութեամբ, որի մասին յիշեցի վերևում: Ահա այդ բանին նախանձելով Մէլիք-Մանասեանները՝ ուզում են իրանք ևս իրանց կալուածները Մէլիք-Մնացականեանների նման մեծացնել: Այսպիսով 2 կալուածատէրեր, կամենալով աւելի հարստանալ՝ վնասում են խեղճ ժողովրդին: Մանակի շահերին ստորադասում, ենթարկում են հասարակական շահեր: Գիւղացիք շատ լարված են դէպի այդ կալուածատէրերը: Մեծ ատելութիւն կայ գիւղում դէպի մէլիքների ժառանգները:

Այսպէս ուրեմն, պանդուխտները հեռանում են գիւղից ոչ թէ այն պատճառով, որ չեն կամենում կանոնաւոր արդիւնք ստանալ երկրագործութիւնից, այլ ուղղակի այն պատճառով, որ հող չը կայ կանոնաւոր երկրագործական աշխատանք սկսելու: Բաքուն, Բաթումը ընդունում են իրանց գրկի մէջ Գետաշէնի երիտասարդներին, բայց չեն խնամում գիւղական պարզ ունևոր հասարակական խրճիթից դժբաղդ հանգամանքների պատճառով դուրս եկած պատանիներին, չեն հովանաւորում նրանց: Մի քանի տարի՝ և լեռների թարմ զաւակը սկսում է խմել, վատնել: Զանազան կասկածելի հիւանդութիւններ բուն են դնում նրա մէջ. սիֆիլիսը, թոքախտը սկսում են մաշել նրան: Եւ նա՝ նախկին առողջ երիտասարդը, յուսահատված վերադառնում է հայրենիք կրկին առողջանալու դիտաւորութեամբ: Հետևանքը լինում է այն, որ մաքուր գիւղն էլ սկսվում է վարակվել: Առաջ են գալիս շատ դժբաղդ դէպքեր, որոնք միմեանց ետևից վնասակար կերպով սկսում են ազդել գիւղացու առանց այն էլ թշուառ կեանքի վրա: Այսպիսով Գանձակի գիւղերից դուրս եկած պանդխտութիւնը վնասակար հետևանքներ է ունենում առ այժմ միայն Գետաշէնի վերաբերմամբ: Միւս գիւղերի պանդուխտները դեռ ևս օգտակար են աւելի, քան վնասակար թէ իրանց ծնողների համար մասնաւորապէս և թէ գիւղի համար՝ ընդհանրապէս:

Սակայն, ինչպէս Գետաշէնի, նոյնպէս և միւս գիւղերի պանդխտութիւնը ունի այն վատ կողմը, որ խլում, տանում է օտարութիւն մատաղ ոյժերը: Գիւղը միանգամայն զրկվում է երիտասարդութիւնից. այսպիսով հասարեա գիւղական կառավարութիւնը ծերակոյտ է ներկայացնում: Հասարակութեան ամեն ասպարէզում ծերերն են աչքի ընկնում:

Այս փոքրիկ ակնարկը ձգելով Գանձակի գաւառից դուրս եկած պանդխտութեան վրա մենք ոչ թէ խորհուրդ կը տանք, որ հնարաւոր եղածին չափ կրճատվի պանդուխտների թիւը, քանի որ այդ կախված է երկրի տնտեսական կեանքից, հազարաւոր ծանրակշիռ հանգամանքներից, որոնք անկարելի են դարձնում գիւղում մնալը: Պանդխտութիւնը կը վերանայ այն ժամանակ, երբ կարիքը կը պակասի մեր գիւղերում. նա աղքատութեան անբաժան ընկերն է: Մենք կը ցանկայինք միայն, որ պանդուխտները օտարութեան մէջ միջոց ունենան պարապ ժամանակ աւելի լուրջ և կարևոր բաներով զբաղվելու, որ փոխանակ անառականոցների՝ գրադարաններ հիմնվեին պանդուխտների համար և փոխանակ գինետների՝ կրթող, զարգացնող և ազնուացնող հիմնարկութիւններ կազմակերպվեին:

Սիմ. Յակոբեանց

Գանձակ.

ղացուն այս ու այն կողմն են քաշքշում, ձեռք ձեռքի են խփում և ամեն ճարպիկութիւն գործածելով, աշխատում են միամիտ գիւղացու խելքը «տլողել», որ գուցէ կովը ոչխարի գնով առնեն, սագը հաւի գնով, ցորենը գարու գնով և այլն։ Գիւղացին մոլորվում է... հետևանքն այն է լինում, որ նա, դարձեալ խաբված, ուղևորվում է տուն, բայց քաղաքից դեռ դուրս չեկած՝ այդ գումարի մի որոշ մասն էլ միկիտաններում է թողնում. միայն երեկոյեան դէմ հարբած ճանապարհ է ընկնում դէպի գիւղ։

Պէտք է ասել, որ Ախալքալաքի գիւղերում արբեցողութիւնը բաւական տարածված է. օրինակ, Վաղեան, Սատխայ, Արակովա, Տիլիսկայ գիւղերը վաղուց յայտնի են իրանց արբեցողութեամբ։ Մեղանչած չենք լինի ճշմարտութեան դէմ, եթէ ասենք, որ Ախալքալաքի վաճառականներից և արհեստաւորներից ամեն մինը մի տղրուկ է գիւղացու մարմնին կպած։ Գիւղացին քաղաքացուն կերակրելու համար է ծնվել, ահա ամենքի «հաւատամքը»։ Ախալքալաքում մինչև անգամ մի այսպիսի աւանդութիւն կայ, իբրև թէ Աստուած ամենից առաջ ստեղծեց երկինքը և երկիրը, յետոյ բոլոր կենդանիներին ու գիւղացուն, իսկ ամենից վերջը՝ մարդուն, այսինքն քաղաքացուն և ցոյց տալով գիւղացուն, ասաց քաղաքացուն. «Քաղաքացի, ահա քո էշը, հեծիր՝ ուր որ ուզում ես գնա»։ Ուրեմն, ախալքալաքցիների կարծիքով, քաղաքացին մեղք չէ գործում, եթէ խաբում, հարստահարում է գիւղացուն։

Ցանկալի է, որ ինտելիգէնտ մարդիկ մտածեն գիւղացիների շահերը և պատիւը պաշտպանող ընկերութիւն կազմելու մասին։

Ախալքալաքցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սուչավա, յունիսի 23-ին

Նորին Վեհափառութիւնը, ազգային լրագիրներուն մէջ հրատարակված՝ հոգաբարձութեանս շրջաբերականէն տեղեկանալով՝ վերջերս Կուրա Հօմօրի մերազնէից պատահած դժբաղդութեանը, հաճած էր ինքնաբերաբար 200 րուբլի շնորհել։

Հոգաբարձութիւնս Նորին Վեհափառութեան այդ անփոխարինելի հոգատարութենէն զգածեալ, արդէն փութացած է իր և համայն Պուգովինայի հայոց շնորհակալութիւնը յայտնել Նորին Վեհափառութեան, բայց մի և նոյն ժամանակ պարտ անձին կը համարի անգամ մը ևս իր շնորհակալութիւնը հրապարակաւ յայտնել առ Նորին Վեհափառութիւնն, որ աշխարհիս զանազան կողմերը ցրված հայերուն մէջ խրատութիւն չի դնելով, իր հայրական շնորհները կը բաշխէ ամեն կողմ, որմէ անմասն չի մնացին նաև Կուրա Հօմօրի ափ մը թշուառները։

Այս առթիւ կը փութանք նաև մեր խորին շնորհակալութիւնը յայտնել ազգային լրագրաց ազնիւ խմբագիրներուն, որոնք հաճեցան արձագանք հանդիսանալ Կուրա Հօմօրի հրկիզելոց համար հոգաբարձութեանս կողմանէ տրված շրջաբերականին։

Ի դիմաց Պուգովինայի հայ եկեղեցեաց հոգաբարձութեան նախագահ՝

Առպետ Վարդերես Կար. Բրունզուլ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, յունիսի 30-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում, ձայնաւորների ներկայութեամբ, կատարվեց հանդուցեալ Թագաժառանգ Ցեսարեվիչ Գէորգի Ալէքսանդրովիչի հոգեհանգիստը։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ պետական կալուածների մինիստրութիւնը ուղարկեց Կովկաս իր ստորագրեալ պաշտօնեաներին՝ քննելու և մանրամասն նկարագրելու թագաւորական այն ազատ հողերը, որոնք յարմար են գաղթականներին այնտեղ բնակեցնելու համար։ Պաշտօնեաների մի խումբ նշանակված է Երևանի, Ելիսաւէտպոլի և Բագուի նահանգներում, իսկ միւս խումբը—Հիւսիսային Կովկասի նահանգներում։

—

Շուտով Անդրկովկասում կը հիմնվի մի խոշոր հիմնարկութիւն էլէկտրական ոյժի գործադրութեան համար։ Ներկայացված է հաստատութեան բարօն Վրանգելի և Գօլուբեվի կողմից մի այդպիսի ընկերակցութեան ծրագիր։ Հիմնական դրամագլուխը սահմանված է 4 միլիոն րուբլի, բաժանված 16,000 ակցիայի, իւրաքանչիւրը 250 րուբլի արժողութեամբ։

—

Ռուսաց աշխարհագրական ընկերութեան խորհուրդը սկսել է բազմակողմանի կերպով քննել մեր տօմարի բէֆորմի հարցը և, այդ նպատակին հասնելու համար, հրաւէր ուղարկեց զանազան հիմնարկութիւններին, որպէս զի դրանք իրանց կողմից ներկայացուցիչներ նշանակեն։

—

«Нов. Время» լրագիրը հաղորդում է, որ էլէկտրո-տեխնիկական դպրոցի առաջին կուրսում ներկայ տարին 60 ազատ տեղեր կան։ Այդ դպրոցը կարող են մտնել միայն քրիստոնէական ռուս հպատակները, որոնք ատեստատներ կամ վկայականներ ունեն ուսումն աւարտելու մասին բարձրագոյն դպրոցներում, գիմնազիաներում, բէալական դպրոցներում և ուրիշ միջնակարգ դպրոցներում, որոնց դասընթացքը բաւարար կը համարեն ինստիտուտ մտնելու համար ներքին գործերի և ժողովրդական լուսաւորութեան մինիստրները։ Բարձրագոյն դպրոցներում ուսումն աւարտածները կընդունվեն առաջին երկու կուրսերում առանց քննութեան, իսկ երրորդ կուրսը մտնելու համար պէտք է առանձին քննութիւն տան։ Միջնակարգ կրթութիւն ունեցողները պէտք է նախապէս քննութիւն տան մաթեմատիկայից, ֆիզիկայից, ռուսաց լեզուից և օտար լեզուներից մէկից (գերմաներէնից, ֆրանսերէնից կամ անգլիերէնից)։ Ներկայ տարին ինստիտուտ մտնելու ցանկացողների խնդիրների ընդունելութիւնը կը շարունակվի մինչև օգոստոսի 15-ը, իսկ քննութիւնները կը սկսվեն սեպտեմբերի 1-ից։

—

Թիֆլիսի վաճառականների կազմած նաւթագործական ակցիոներական ընկերութիւնը նշանակել է հիմնական դրամագլխի համար 750,000 բուբլի, բաժանված 3000 ակցիայի, իւրաքանչիւրը 250 բուբլի արժողութեան։ Հիմնադիրներն են՝ Վ. Եղիազարեան, Խ. Արզումանեան, Ա. Աւետիքեան, Ռ. Մարտիրոսեան, Կ. Ղարիբեան, Գ. Տէր-Նիկողոսեան, Ց. Շալամեան և Ա. Այվազեան։

—

Օպերային երգչուհի Պապայեան ներկայումս երգում է Պետերբուրգի «Արկադիա» թատրոնում։ Մայրաքաղաքի թերթերը ընդհանրապէս գովասանքով են խօսում երգչուհու խաղի և ձայնի մասին։ Պապայեան դուրս է եկել «Տրավիատա», «Ֆաուստ» և «Բոհեմա» օպերաներում։ «С. Пет. Вѣд.» լրագրի թատրոնական կրիտիկոսը ասում է հետևեալը. «Եթէ «Տրավիատայի» մէջ Պապայեան ունեցաւ կասկածելի աջողութիւն, նա «Ֆաուստի» մէջ շատ սիրուն կատարեց Մարգարիտայի դերը, որ էֆֆէկտով դեր է, բայց և դժուար։ Մարգարիտայի ամեն մի շարժումը յայտնի է հասարակութեան, որը մի և նոյն ժամանակ լաւ յիշում է այդ դերի մէջ այնպիսի կատարողներ, ինչպէս են Մելբա, Արնօլդսոն, Բօլսկա։ Պապայեան առանձին ջանքով արտայայտում է Մարգարիտայի անմեղ, միամիտ, հասարակ բնաւորութիւնը և չէ հետևում յիշած երգչուհիների աւելի փայլուն և սեգ տիպ ներկայացնելուն։ Բնական, անարուեստ գուրգուրանքը բնորոշում էր Մարգարիտային ամբողջ երրորդ գործողութեան մէջ, որտեղ Պապայեան երգեց լաւ տրելէրով և մաքուր si նօտա վերցնելով։ Պապայեան, չը նայելով իր երիտասարդ հասակին, արդէն վարժված երգչուհի է, որ հմտութեամբ գործ է ածում բեմական էֆֆէկտներ և երգում է թեթև ու ազատ։ Հասարակութիւնը սաստիկ ծափահարեց «Air des Bijoux» և ուրիշ կտորների համար։ Բայց երգչուհին ճըկուն և բազմակողմանի ձիրքի տէր չէ և նրա աջող կատարած դերերի շրջանը սահմանափակ է»։ Նոյն կրիտիկոսը «Բոհէմա» օպերայի ներկայացման վերաբերութեամբ ասում է, որ Պապայեան կատարեց իր դերը շատ գեղեցիկ։ Երգչուհին ցոյց է տալիս մեծ բարեխղճութիւն և ջանասիրութիւն իր դերերի ուսումնասիրութեան մէջ։ Առաջին գործողութեան մէջ կօկէտ կնոջ Միմիի տեսարանը նա կատարեց բնական և հասարակ, առանց չափազանցութիւնների։ Միմիի պատմութիւնը իր կեանքի մասին նա երգեց երաժշտական կողմից շատ մաքուր։ Հաւասարաբար աւելի լաւ յոյլ անցաւ մահվան տեսարանը, բայց և հեղինակն այստեղ քիչ նիւթ է տալիս երգչուհուն։» «Новости» լրագրի կրիտիկոսը ասում է, որ շատ տիկիններ թատրոնից դուրս եկան արտասուքը աչքերին, զգացված խեղճ Միմիի տխուր բաղդի և նրա տանջանքների արած տպաւորութիւններից։ «Новое Время» լրագիրը նոյնպէս գովում է Պապայեանի երգերը և Միմիի դերի մէջ եղած անկատարութիւնները վերագրում է ոչ թէ երգչուհուն, այլ օպերայի հեղինակ Պուչչինիին։

—

Քութայիսի նահանգի Շարօպանի գաւառի մարգանեցը և ուրիշ մեծաքները շահագործելու նպատակով։ հիմնվում է մի ընկերութիւն «Потійско-Чіатурійское марганцево-горнопромышленное и металлургическое общество» անունով, երեք միլիոն բուբլի հիմնական դրամագլխով, բաժանված 12,000 անուանական և անանուն ակցիաների, իւրաքանչիւրը 250 բուբլի արժողութեամբ։ Հիմնադիրներն են. Քութայիսի վաճառականներ՝ Սայեթ, Գասֆելդ, պաշտօնեայ Բաֆալովիչ և Օդէսայի վաճառական Գալպերն։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ հաղորդում են, որ Շուշու բէալական դպրոցը այս տարի աւարտած աշակերտների ցուցակում, որ տպված էր «Մշակի» մէջ, չէ յիշատակված Սամսոն Սարուխանեանց, որ նոյնպէս աւարտել է իր ուսումը։ Լրացնում ենք մեր լուրի այդ պակասութիւնը։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Յունիսի 19-ի գիշերը, ժամը մօտ 10-ին, երկրաշարժի երկու զգալի ցնցումներ տեղի ունեցան Հին-Նախիջևանում, գիւղերում և Արարատեան դաշտի վրա։ Առաջին ցնցումը խիստ զգալի էր և դարթեցրեց քնածներին, իսկ երկրորդ հարուածը, որ անմիջապէս յաջորդեց առաջինին, թոյլ, հազիւ նկատելի էր. ցնցումները գալիս էին ձիւնապատ Արարատի կողմից և ընթանում դէպի հարաւ-արևելք։ Առաջին խիստ ցնցումը սաստիկ վախեցրեց ազգաբնակութեանը, բայց վախը չուտ փարատվեց. երկու ցնցումները տեսցին երկու բոպէ»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Բագուի նահանգական դատարանի քրէական բաժինը եկաւ Ղուբա. նախագահողն է Պ. Ֆ. Սաբանէեվ, անդամ Վ. Ե. Թէդդկօ և երկու քարտուղար՝ Բ. Ս. Դօլինսկիյ, Մ. Ի. Բարանով։ Դատարանի երրորդ անդամ կը հրաւիրվեն Ղուբայի հաշտարար և պատուաւոր դատաւորները։ Սէսսիան երէկ, յունիսի 18-ին, սկսեց իր գործունէութիւնը և մի շարք քրէական գործերի քննութիւն կատարեց։ Նա կը մնայ այստեղ մինչև սեպտեմբերի 1-ը, իսկ գործեր նշանակվել են մինչև օգոստոսի 5-ը, թւով 91 հատ. էլի պէտք է նշանակեն գործեր։ Գործերի քննութիւնը կը կատարվի շաբաթը երեք անգամ։ Ամենահետաքրքիր գործը հետևեալ քստմնելի ոճրագործութիւնն է։ Հուսարի ընակիչ Եգոր Սուխորուկով հարբած ժամանակ առանցքում է իր ութամեայ Մարիա խորթ աղջկան (իր կնոջ աղջկան). այդ զազրալի գործի տխուր իսկութիւնը հաստատվում է թէ անպատւած մանուկ աղջկայ քնիչին տուած բացատրութիւնից և թէ մանկաբարձուհիների և բժիշկների կատարած քննութիւնից։ Այդ գործը, որ զզուանք և ցնցող տպաւորութիւն է թողել հասարակութեան վրա, նշանակված է օգոստոսի 5-ին»։

—

Նոր-Բայազէտի գաւառի ՎԵՐԻՆ-ՂԱՐԱՆԼՂՂ գիւղից մեզ գրում են. «Մի նոր երևոյթ մեր գաւառակի համար այն է, որ գաւառի հաշտարար դատաւոր պ. Կազանսկի ամսոս 14-ին, իջևանելով Գէորգ քահանայ Նալբանդեանցի տանը, այցելութիւն տուեց բոլոր գիւղերին, յատուկ հրաւիրատոմսերով կանչեց գիւղական դատաւորներին և պատուիրեց նրանց արժանավայել կերպով վարվել գանգատաւորների հետ, և գիւղացի գանգատաւորներին նեղութիւն չը պատճառել. ինքը, դատաւորը, անձամբ այցելելով տեսաւ գիւղացիների դատը և լսեց գանգատները։ Շնորհիւ պրիստաւ Օստրովսկու աչալուրջ վերահսկողութեան, մեր վիճակի մէջ մինչև այժմ թէ յայտնի, թէ գաղտնի աւազակութիւններ բնաւ տեղի չեն ունեցել։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին, յուլիսի 4-ին

Անցեալ օրը «Գիտութեանց ակադեմիայում», սրա հիմնադիր՝ Գոթֆրիդ Վիլհելմ Լէյբնիցի յիշատակին կատարած տօնախմբութեան առիթով, Բերլինի հաւալսարանի լեզուագիտութեան ուսուցչապետ և ակադեմիայի պատմական-լեզուագիտական բաժանմունքի մշտական քարտուղար պրոֆէսօր Դիլս հանդիսաւոր ճառ արտասանեց, բնաբան ունենալով՝ «Լէյբնից և տիեզերական լեզուի պրոբլէմը»։ («Leibniz und das Problem dem Universalsprache»։ Շատ ճարտար լեզուով նկարագրելով Լէյբնիցի համաշխարհային հանճարը (որպէս իրաւամբ Ֆ. Ֆիշէր նրան անուանում է), կարճառօտ խօսքերով պարզաբանեց Լէյբնիցի նշանակութիւնը և նրա անգին ազդեցութիւնը անցեալ՝ 18-րդ դարի փիլիսոփայութեան վրա։ Լէյբնիցի փիլիսոփայութեան սկզբունքէն էր բոլոր դիտութիւնների կենտրոնացումը մի ընդհանրական յենակէտի, մի ընդհանուր պրինցիպի վրա. (բաւական է յիշել Լէյբնիցի բնափիլիսոփայութեան մէջ քարոզած «Monadenlehre»)։ Նա աշխատում էր ստեղծել մի «Seientia universalis»։ Ահա այդ «տիեզերական գիտութեան» գաղափարի հետ նրանում նոյնպէս միտք ծագեց ստեղծել գիտնականների համար մի «տիեզերական լեզու». իր գրքերում կան նոյնպէս փորձեր, այս պրոբլէմը լուծելուն նուիրված, որոնց մէջ Պլատոնի «թուերի թէորիայի» (Zahlentheorie) ազդեցութիւնը պարզ կերպով նկատելի է։ Թէպէտ Լէյբնից այս պրոբլէմը, ինչպէս և շատ ուրիշները, լուծել չը կարողացաւ, սակայն ապագայ սերնդի համար ուղին հարթեց։

Լէյբնից անցեալ դարի առաջնորդող աստղն էր, իր մտքերովը անմիջական յարաբերութեան մէջ գիտնական աշխարհի հետ, և այս յարաբերութիւնը մինչև այժմ էլ չէ ընդհատվել և յաջորդ դարի համար հաւանօրէն իր «տիեզերական լեզու» ստեղծելու ժտրումներովը հետաքրքիր կը մնայ։

«Տիեզերական լեզուն» մասամբ արդէն գոյութիւն ունեցել է ժամանակների ընթացքում։ Այսպէս, նախ աստրերէնը, ապա յունարէնը, ապա լատիներէնը, որոշ ժամանակամիջոցներում, ընդհանուր գործածական լեզուներ են եղել։ Նախորդ դարում ֆրանսերէնը գրեթէ համաշխարհային լեզու դարձաւ, և հետզհետէ նորից իր նշանակութիւնը՝ իբրև համաշխարհային լեզու, կորցրեց և այժմ հազիւ մի նշոյլ պահպանել է կարողացել։ Սա կապված է այս դարում ուժեղ ազգայնական-պետութիւնների կազմվելուն հետ։

Ապա շարունակելով, ճառախօսը մատնանիշ է անում անգլիերէնի առաւելութիւնները, նրա ճկունութիւնը և արտաքոյ կարգի քերականական պարզութիւնը, միացնելով իր մէջ բոլանական և գերմանական տարրերի բարեմասնութիւնները և մանաւանդ Մեծ-Բրիտանիայի և Ամերիկայի քաղաքական մեծ դիրքի և աւելի ևս նրանց վաճառականութեան ահագին տարածման հետ, այդ լեզուն ամենագործնականը և ամենատարածվածն է. այս մտքով անգլիերէնը անտարակոյս ապագայի լեզուն է։ Բայց ընդհանուր գիտական տեսակէտից նայած՝ նոր-լատիներէնը կոչված է գիտնականների «տիեզերական լեզուն» դառնալու։ Իր կարծիքով, Լէյբնիցի, Քէպլերի, Լինէի և ուրիշների գործածած նոր-լատիներէնը ընդունակ է ամենանորագոյն գիտական արտադրութիւնները հեշտութեամբ արտայայտելու։ Դիլս առաջարկում է լատիներէն լեզուի վերատին մուտքը գիտնականների շրջանում։ Այս նպատակով, ճառախօսի առաջարկութեամբ, հրաւիրվում են բոլոր ակադեմիաները այս աշնան Վիսբադէնում, մի «համաակադեմիական միութիւն» (Interakademische Vereinigung) հիմնելու համար։

Խիստ հետաքրքիր է, թէ ինչ ելք կունենայ։

t.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պօլ Դէրուլէդ շատ զարմացրեց իր հայրենասէր-բարեկամներին, որոնք ի պատիւ նրա բանկէտ կազմեցին Սէն-Կլուի մէջ։ Նա մի ճառ արտասանեց, որի մէջ թոյլ տուեց Դրէյֆուսի անմեղութեան հնարաւորութիւնը։ «Այո,—ասեց նա,—եթէ Դրէյֆուս անմեղ կը յայտնվի, այն ժամանակ չը կայ բաւարար պատիժ, չը կայ բաւարար ամօթի սիւն այն մինիստրների համար, որոնք մեղադրեցին կամ թոյլ տուեցին մեղադրելու Դրէյֆուսին մի յանցանքի մէջ, որ նա չէ գործած։ Ինչ վերաբերում է մարտիրոսին, որ նրանց դէմ դարձաւ, ոչ մի վարձատրութիւն, իրաւունքների ոչ մի վերականգնումն բաւարար չէ կարող լինել։ Արդարացման դատավճիռը ոչ թէ պարզ արդարացումն կը լինի, այլ ապօթէօզ։ Հարցի ամեն ուրիշ կերպ լուծումը կը լինի ստութիւն, կեղծաւորութիւն, բիւզանդականութիւն, մի բան, որ վայել չէ Ֆրանսիային։»

—Բերլինի լրագիրներին Կ. Պօլսից հեռագրում են յունիսի 22-ից (յուլիսի 4-ին). «Ռուսաց դեսպան Զինովիէվ մեծ վէզիրի և արտաքին գործերի մինիստրի հետ մի քանի խորհրդակցութիւններ ունեցաւ հայ գաղթականներին հայրենիք վերադարձնելու հարցի առիթով»։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

29 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունիսի 29-ին Իսահակեան տաճարում Պետերբուրգի մետրոպոլիտ Անտոնի հոգեհանգիստ կատարեց ի Տէր հանգուցեալ Թագաժառանգ Ցեսարեվիչի համար։ Միաժամանակ հոգեհանգիստներ կատարվեցին մայրաքաղաքի բոլոր եկեղեցիներում և տաճարներում։ Տաճարներն լիքն էին ժողովրդով։

Ցարսկոյէ-Սէլօում նշանակված լէյբ-դվարդիական պահեստի հետևակ գնդի յօթեղեռնական զօրահանդէսը լեռնաձգվեց՝ Թագաժառանգի հաւատարիմ ոգի պատճառով։

ՎԱՐՇԱՎԱ։ Յունիսի 29-ին այստեղի մայր եկեղեցում արքեպիսկոպոս Իերոնիմ, երկրի կառավարչի, շատ բարձրաստիճան անձերի և ժողովրդի ներկայութեամբ հոգեհանգիստ կատա-

բեց ի Տէր հանգուցեալ Թագաժառանգ Ցեսարեվիչի համար։

ԿՐՕՆՇՏԱԴ։ Թագաժառանգ Ցեսարեվիչի մահվան պատճառով, բոլոր արքունական հիմնարկութիւնները, հիւպատոսարանները, քնակարանները, զինուորական նաւերը նաւահանգիստներում և նաւամատոյցներում կիսով չափ իջեցրին դրօշակները։

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ։ Նոր նաւահանգստի տարածութիւնը 200,000 քառակուսի սաժէնից աւելի է։ Սկզբում նահանգի ցանքսերի անբաւարար դրութիւնը վերջերս լաւացաւ։ Հաճարը հասել է։

ՐՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ։ Նահանգում հացի հունձը վերջանում է։ Ռոստովի շրջանում բերքը քանակութեան կողմից քիչ է, բայց յատկութեան կողմից շատ լաւ է, Տագանրօգի շրջանում— միջակ է։ Երեք օր շարունակ անձրև է գալիս, որը խանգարում է հունձին։

ՕԴԷՍԱ։ Մայր տաճարում սրբազան Իւստինեան, իշխանութեան և ահագին բազմութեան ներկայութեամբ, հոգեհանգիստ կատարեց ի Տէր հանգուցեալ Թագաժառանգ Ցեսարեվիչի համար։ Հոգեհանգիստներ կատարվեցին և ուրիշ եկեղեցիներում։

ԿԱԶԱՆ։ Պետրոպավլովսկի տաճարում արքեպիսկոպոս Արսէնի հոգեհանգիստ կատարեց ի Տէր հանգուցեալ Թագաժառանգ Ցեսարեվիչի համար, իշխանութեան և բազմաթիւ աղօթողների ներկայութեամբ։

ՊԱՐԻԶ։ Լրագիրները, խօսելով Թագաժառանգ Ցեսարեվիչի մահվան մասին, յայտնում են, որ Ռուսաց Կայսերական Ընտանիքին պատահած վիշտը տխուր արձագանք կը տայ Ֆրանսիայում, որովհետև ռուսաց վիշտը՝ մի և նոյն ժամանակ ֆրանսիացիների վիշտն է։

ԴԱՐՄՇՏԱԴ։ «Darmstäter Zeitung» հաղորդում է, որ մեծ դքսական զոյգը յետաձգեց իր Ռուսաստան գնալը, Թագաժառանգ Ցեսարեվիչի մահվան պատճառով։ Մատդրութիւն կար գնալ տաններքին։

30 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Առանց բացառութեան բոլոր շօրքերը սուգ են պահելու երեք ամիս, սկսած յունիսի 28-ից։

Վիլնօի ուսումնարանական շրջանի հոգաբարձու սենատոր Սերգիէվսկուն շնորհված է իսկական գաղտնի խորհրդականի աստիճան, արձակելով ուսումնարանական շրջանի հոգաբարձուի պաշտօնից։

ՊԱՐԻԶ։ «Liberté» լրագիրն ասում է, որ ամբողջ Ֆրանսիան միանում է Կայսերական ընտանիքի և Ռուսաստանի վշտին։ Ապա լրագիրը ջերմ կերպով գովաբանում է ի Տէր հանգուցեալ Թագաժառանգ Ցեսարեվիչին։

«République Française» լրագիրը անուանում է Հանգուցեալին արժանաւոր զաւակ Կայսր Ալէքսանդրի, Որից Նա ժառանգեց այն ամբողջ ազնիւ հայրենասիրական խանդը։ Ֆրանսիայի ծովափի վրա, ուր հանգուցեալը հիւր էր, երբեք չեն մոռանայ Նրա բարութիւնը, Նրա զգայնութիւնների ջերմութիւնը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

	№ 1 գնացքը։	№ 3 գնացքը։
Բաքուից դուրս է գալիս ցեր.	4 ժ. 15 ր.	գեշ. 12 ժ. 20 ր.
Թիֆլիս է հասնում առ.	8 ժ. 40 „	երբ. 6 „ 38 „
Թիֆլ. դուրս է գալիս „	9 „ 10 „	երբ. 7 „ 37 „
Բաթում է հասնում երբ.	8 „ 32 „	առ. 8 „ 12 „

	№ 2 գնացքը։	№ 4 գնացքը։
Բաթումից դուրս է գալիս առ.	9 ժ. 15 ր.	երբ. 9 ժ. 05 ր.
Թիֆլիս է հասնում երբ.	8 ժ. 53 „	առ. 9 „ 45 „
Թիֆլիսից դուրս է գալիս „	9 „ 23 „	„ 11 „ 32 „
Բաքու է հասնում ցեր.	1 „ 04 „	„ 6 „ 15 „

ԴԻԼԻԺԱՆՍՆԵՐ

Հէնդ հոդու համար

Թիֆլիսից դուրս է գալիս Գիշերում է	7 ժ. առ. Մլեռում 9 ժամ. առ. Պասանուր
Վագոնավագ հասնում է	7 ժ. 20 ր. երբ. 9 ժ. 20 ր. երբ.
Վագոնի հոդու համար (չեն գիշերում)	
Թիֆլիսից դուրս է գալիս	1 ժ. ցերեկ. 7 ժ. երեկ
Վագոնավագ հասնում է	3 „ 25 ր. երբ. 9 ժ. 50 ր. երբ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1½—2 ժ. ներքին և միաչեռական հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՈ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիտ, արեան, կաթի և այլն։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
148—151 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Տպագրութեան է յանձնված
ԿԱՄԻԼԼ ՓԼԱՄՄԱՐԻՕՆԻ
ՈՒՐԱՆԻԱ
Նշանաւոր աստղագիտական վէպը, 366 էջ
Թարգ. Հ. Առաքելեանի
Բացված է այժմ բաժանորդագրութիւն—1 ռուբլի։ Տպագրութիւնից յետոյ գինը կը լինի 1 ռ. 50 կ.։ Բաժանորդ գրվել ցանկացողները մինչև սեպտեմբերի 1-ը պէտք է յայտնեն, ուղարկելով 1 ռուբլի այս հասցէով, Թիֆլիս, Հրատ. Ընկ. գրասենեակ, Գալուստ Գալստեանցին։ (Հ.) 8—10

ՄԱՆԿԱԲԱՐԶՈՒՀԻ
Վ. Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
Միքայէլեան փողոց, տ. № 93. տէլէֆօն № 506։ (Հ.) 26—45

ԲԺԻՇԿ Յ. Յ. ՂՕԿԻԵԼԵԱՆ
Ընդունում է՝ վեներական, ախտական, մորթու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝
Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը։
Գանձակայա փողոց, տուն Մարգարովի, № 31։
(Ե. Հ. չ.) 49—100

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

ՐՕՑԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՑՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՑՆԱԽԱՋԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՑԼՆ, ԵՒ ԱՑԼՆ։

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։
ՆՈՐ-ՊՐԷՑՍԿՈՒՐԱՆՏՆ
ուղարկվում է ձրի։
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՑՆԱԽԱՋԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ
ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան
Музыкалное депо Б. М. Мириманіана, ТИФЛИСЪ.
Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
(չ.) 12—20

Կովկասի ՀԱՑՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրադարան-ընթերցարանը
(Միջին փողոց, տ. Տէր-Աստուրովի, Ադելխանեանի մագազինի դիմաց), բաց է առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 5—9։ Ստացվում են մայրաքաղաքների և տեղական բոլոր թերթերը։ Մուտքը 2 կոպ., ամսով 40 կ. աշակերտներից կէս վճար։ 48—50

ԷԼԵՔՏՐՕ-ՏԵԽՆԻՔԱԿԱՆ դպրոցի վերաբերութեամբ ինձ դիմել ցանկացողների համար անհրաժեշտ հասցէն՝ Одесса, М. Маркарянцъ, въ контору Бр. Цовьяновыхъ и К°. Իսկ բացվելիք դպրոցի հասցէն. Одесса, Учредителю Электро-Технической школы Г.-ну Б. И. Соколовскому. Гаванная, № 5.
2—2 Մ. Մարգարեանց

ԹԱՒՐԻԶԻ
Մանկական պարտէզի, արհեստանոցի և մասնաւոր ընտանիքի համար պահանջվում են վարժուհիներ։
Հասցէ՝ Փոքր Բեթղեհէմի փողոց, տուն Մատինեանի, № 3. Օր. Պետրոսեան
3—5

Ռաշտի
Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան կար ու ձևի ՈՐՀԵՍՏԱՆՈՑԻ համար հարկաւոր է մի մասնագէտ վարժուհի։ Ցանկացողները իրանց մանրամասն պայմաններով թող դիմեն ընկերութեան քարտուղարին հետևեալ հասցէով.
Въ Рештъ (Персія) чорезъ Баку Энзели, секретарю Рештскаго Армян. Женск. Благот. Общест. А. Казаряну.
2—3

ԲԱՂԼԻՆՋՆԵՐԻ ԵՒ ՈՒՏԻՃՆԵՐԻ ԴԷՄ
ԿԵՕԼԵՐԵԱՆ ՀԵՂՈՒԿ
ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ և ԲՈԼՈՐ յայտնի վաճառականների մօտ։ Քսելով վրձինով, կամ աւելի լաւ՝ սրսկելով այդ հեղուկը ամեն տեղ, որտեղ գտնվում են այդ պարազիտները, այն բոպէին անհետացնում է նրանց բոյները ու ձուները և այնպէս արմատական ձևով, որ երկար ժամանակ այդ մի և նոյն տեղը միջատները չեն երևում։ Հեղուկը անգոյն է և պաստառների ու գահկարասիների վրա ոչ մի հետք չէ թողնում միջատը, օրինակ ուտիճը, որի վրա ընկնում է այդ հեղուկից մի կաթիլ, ինչպէս կարելի է նկատել, այն բոպէին ճը, որի վրա ընկնում է այդ հեղուկից մի կաթիլ, ինչպէս կարելի է նկատել, այն բոպէին մեռնում է մէջքի վրա, և սատկում։
Գինը շատ էժան է և մատչելի, մինչև անգամ ամենահամեստ տնտեսութեան համար։

Լոյս տեսաւ
և վաճառվում է Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում
ԳԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
գիրք Դ.
ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Ցաւելուածներով, ծանօթութիւններով, պատկերներով։
ԱՇԽԱՏ. ԳԻՒՏ ա. քահ. ԱՂԱՆԵԱՆՑ
ԳԻՆՆ Է 4 ՌՈՒԲԼԻ
Նոյնտեղ վաճառվում են «Գիւանի» Ա.—Բ. գիրքը. գինն է 2 ռ. և Գ. գիրքը, գինն է 7 ռ.
ՊԱՐՈՆԵԱՆ. Ծիծաղ, հեղինակի պատկերով, գինը 1 ռ. 25 կոպէկ։
» Արևելեան ատամնաբոյժ, » — 50 »
(Հ.) 4—5

ՄԵՔԵՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ, Հ. ԿԵԱՆՋՈՒՆՑԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.
ԲԱԳՈՒ
ՆՐԱ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԲԻԲԻ-ՀԷՅԲԱԹՈՒՄ
Սկսել է իր գործունէութիւնը,
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՊԱՏՈՒԷՐՆԵՐ՝
ամեն սիստեմի մեքենաների և գործիքների, մասնաւորապէս հորեր փորելու և նաւթ քաշելու համար՝ շոգէկաթսաների, թորիչների, թուջէ զանազան ձուլուածքների՝ մինչև 1000 պուդ, զանազան պղնձէ ձուլուածքների և այլն և այլն։ Գործարանի պահեստում կարելի է գտնել միշտ Բագուի համար հարկաւոր գործիքներ։
Գործարանի Բիբի-Հէյբաթի բաժանմունքը յանձն է առնում հորեր փորել կապալով Բիբի-Հէյբաթում։
Պատուէրների համար դիմել՝ քաղաքի գրասենեակը (Старо-Полицейская, տուն Արաֆելովի, տէլէֆօն № 749), գործարան. տէլէֆօն № 54, կամ Բիբի-Հէյբաթի բաժանմունքը՝ տէլէֆօն № 451. (Ե. Հ. չ)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ,
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 7/19 յուլիսի ՍԻՐԿԱՍԻ շոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԳ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվէրպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի և Մայաւրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. և Ի. Մուրադեանցներին, Նարբեժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍՍԻՑՍԿ—պ. Մելխիորեանցներին։ (Ե. Հ. չ.) 12—20

Дозволено цензурою, Тифлисъ, 30 Іюня 1899 г.
Типографія Грузинск. Т.—ва Орбеліановская ул., № 27.